

Ն Ա Մ Ա Կ Խ Մ Բ Ա Գ Ր ՈՒ Թ Յ Ա Ն

Գյուղատնտեսական և բիոլոգիական գիտությունների առարկաներում աշխատողներից շատերը չեն մտահոգվում, որպեսզի իրենց կատարած գիտահետազոտական աշխատանքների արդյունքները շարադրվեն ընթերցողի համար հասկանալի և կանոնավոր հայերեն լեզվով: Լեզվի վրա շատ քիչ ուշադրություն է դարձվում: Դա երևում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրում» (բիոլոգ. և գյուղատ. սերիա) զետեղված հոդվածներից և ամփոփումներից: Այլ կերպ ինչով բացատրել, որ շատ պարբերություններ և նախադասություններ բոլորովին չեն հասկացվում, իսկ ընդհանուր առմամբ հոդվածները շարադրված են խրթին ոճով, հայոց լեզվին անհարազատ արտահայտություններով, նույնիսկ քերականական սխալներով:

Ասածս հիմնավորելու համար՝ որպես ընթերցող, ուզում եմ «Տեղեկագրում» տպագրված հոդվածներից և ամփոփումներից քերել մի քանի օրինակ: Վերջենք թեկուզ «Տեղեկագրի» 1955 թ. առաջին հինգ համարները: Սկսենք երկրորդ համարից, և բերենք ընկ. Բ. Կոստանյանի հոդվածից միայն մի օրինակ (էջ 58): Հեղինակը իր հոդվածը սկսում է այսպես. «Մի շարք հետազոտողներ [1, 2, 8] իրենց փորձերով հաստատում են, որ բույսի սեփական ծաղկափուռը ներկայությամբ փոշոտումից այնպես, ինչպես զգալի չափով բարձրանում է պտղակազման տեղում, այնպես էլ փոփոխվում է ստացված սերնդի մահանդակալությունը: Այս նախադասությունից կռահել անգամ դժվար է, թե ինչ է ուզում ասել հեղինակը: Այսպես են շարադրված նույն հեղինակի և մի շարք այլ պարբերություններ:

«Տեղեկագրի» № 4-ում ընկ. Մ. Սիմոնյանի հոդվածի հենց առաջին նախադասությունը լեզվի տեսակետից հաջող համարվել չի կարող (էջ 11):

«Այրուտեխնիկական միջոցառումների ամբողջական սխեմայում ցանքի ձևը համարվում է կարևորագույն միջոցառում, որը պետք է ուղղված լինի բույսի բիոլոգիական հատկանիշների, արտադրական խնդիրների և հողակլիմայական գործոնների տեսակետից տվյալ կուլտուրայի համար ամենանպաստավոր արտաքին պայմաններ ստեղծելուն: Բերենք նույն հեղինակի մի ուրիշ նախադասություն, որը դարձյալ «զժվարամարս է» (էջ 13):

«Չնայած նրան, որ ընդհանրապես սովորական շարքացանի վարիանտում ծիւրի թիվը սկզբնական շրջանում խաչաձև ու նեղաչառ ցանքերի ձևերի համեմատությամբ մեծ է, այնուամենայնիվ վեգետացիայի շրջանում հասնում է մի մոմենտ, երբ խաչաձև ու նեղաչառ ցանքերի վարիանտներում մնացած բույսերի թիվը հավասարվում և այնուհետև սկսում է գերակշռել սովորական շարքացանի բույսերին ու մինչև վեգետացիայի վերջը համեմատվող վարիանտների միջև բույսերի զգալի տարբերություն է նկատվում:

Կիտական միտքը պետք է արտահայտել ըստ հնարավորին կարճ նախադասություններից կազմված, հստակ և պարզ լեզվով, որպեսզի ընթերցողը հեշտությամբ հասկանա հեղինակի միտքը, թեև, իհարկե, կարճ նախադասությունն էլ կարող է զժվար հասկացվել, եթե նա խնամքով չի կազմված:

Լեզվական անհարիսություններ ունի և ընկ. Գ. Գալստյանի հոդվածը «Տեղեկագրի» 5-րդ համարում (էջ 41):

«Այդ նույն խոտախառնուրդներից առվույտի սերմ ստանալու. դեպքում՝ մինչև առվույտի սերմերի հասունացումը, հացազգի խոտաբույսերի սերմերը ամբողջովին թափված են լինում և առվույտի սերմի բերքահավաքի մամանակ հացազգի խոտաբույսերի ամբողջ մասսան, իսկ առվույտի տերևազուրկ ցողուններն ամբողջությամբ շորացած ու կուպտացած են լինում և ստացվում է անշահանքի թիւս ազրաս ծղոտ» (էջ 41):

Այնլի խրթին է նույն հեղինակի հետևյալ նախադասությունը.

«Ինչպես տեսնում ենք, նշված խոտախառնուրդներում խոտաբույսերի սերմաբուծությունն աշխատանքները նպատակահարմար է կազմակերպել՝ առվույտի և բազմահարձակության խոտախառնուրդի դեպքում, խոտազաչտի օգտագործման առաջին տարում՝ բազ-

մահար ռադիոստի սերմերի, իսկ երկրորդ տարում առվույտի սերմերի ստացումը» (էջ 61):

Գովելի է, իհարկե, որ գիտաշխատողները իրենց կատարած գիտահետազոտական աշխատանքների արդյունքները հաղորդում են նաև հայերեն լեզվով, սակայն նրանք հաճախ մոռանում են, որ գիտությունը մոտեցնել ժողովրդին հնարավոր է միայն կանոնավոր, պարզ և հասկանալի լեզվով: Հետևապես մեր գիտաշխատողները պետք է ջանքեր չխնայեն իրենց լեզուն ղյուրըմբռնելի և ըստ ամենայնի անխոցելի դարձնելու համար: Պատահում են, իհարկե, և հաջող լեզվով դրած հոդվածներ, բայց դրանք շատ չեն:

Տարբեր բնույթի և աստիճանի լեզվական թերություններ կան այս համարների նաև ուրիշ հոդվածներում: սակայն այսքանն էլ բավական է հոդվածների հայերեն լեզվի մասին բնդհանուր գաղափար կազմելու համար:

Այժմ անցնենք «Տեղեկագրում» գետեղված ռուսերեն հոդվածների հայերեն ամփոփումներին:

Անհասկանալի լեզվով է գրված ընկ. Պ. Գոդոսովի հոդվածի հայերեն ամփոփումը (№ 3, էջ 94): Որպես օրինակ բերենք միայն մեկ նախադասություն:

«Այդ մեթոդը հիմնված է հողից աղային ջրաթուրմ ստանալու հնարավորության և այն դեպի դուրս՝ հեռատար առուների մեջ նետելու վրա: Նշված մեթոդը իրենից ներկայացնում է հողում ջրի վերընթաց և վարընթաց հոսքի սկզբունքի վրա հիմնված վացումների միջին մի տեսակի, այսինքն հանդիսանում է, այսպես ասած, նրանց համակցությունը» (էջ 94):

Ընկ. ընկ. Ռ. Շուլցի և է. Դավթյանի համատեղ հոդվածի ամփոփման մեջ (№ 5, էջ 91) կա այսպիսի նախադասություն. «Ի զարգացումն սովետական տարրեր հետազոտողների տեսակետների, մենք առաջարկում ենք սպեցիֆիկության հետևյալ սահմանումը հյուրընկալ ապրագիտային սպեցիֆիկությունը պարագիտի տվյալ հյուրընկալի (կամ հյուրընկալների շրջանին) հարաբերություն հարմարված լինելն է, որի էությունն է՝ 1) պարագիտի պահանջների համապատասխանությունը նրա գոյության պայմաններին տվյալ հյուրընկալի մեջ և 2) հյուրընկալի պաշտպանողական միջոցները որոշ չափով հաղթահարելու բնդունակության առկայությունը պարագիտի մեջ»:

Այս կերպ է շարադրված ամբողջ ամփոփումը: Առանց ռուսերեն տեքստը կարդալու, ընթերցողը այս ամփոփումից հաղիվ թե կարողանա բան հասկանալ, չարց է ծագում: Ինչու և՛ արվում նման ամփոփումները, միթե միայն իրենց պարտքը ձևականորեն կատարելու համար:

Մենք գտնում ենք, որ ռուսերեն տեքստի հայերեն ամփոփումները պետք է տալ հասկանալի ձևով և ավելի հանգամանորեն, որպեսզի հայ ընթերցողը լրիվ գաղափար կազմի հոդվածի բովանդակության մասին և հեշտությամբ յուրացնի այն հետևություններն ու եզրակացությունները, որը տալիս է հոդվածագիրը: Ափսոսանքով պետք է արձանագրել, որ ամփոփումների մեծ մասը սխեմատիկ և լակոնիկ է և մեծ մասամբ կրում է ձևական բնույթ: Մենք չենք ժխտում, որ պատահում են և շնորհքով կազմած ամփոփումներ, բայց դրանք խիստ սակավաթիվ են:

Հանգամանորեն պետք է գրել նաև հայերեն հոդվածների ռուսերեն ամփոփումները, որպեսզի ռուսական հասարակայնությունը իրազեկ լինի Հայաստանում հայերեն հրատարակվող գիտահետազոտական աշխատանքների նկատմամբ:

Հարկավոր է ուշադրության առնել և հետևյալ հանգամանքը: Բանն այն է, որ «Տեղեկագրում» հաճախ ամփոփումների բովանդակությունը նշտորեն չի համապատասխանում ռուսական տեքստի բովանդակությանը և եզրակացություններին:

Օրինակ՝ ընկ. Ն. Մայուրյանի հոդվածի ամփոփման մեջ (№ 4 էջ 27) բացի լեզվական անհարթություններից, կան, նաև սխալ թարգմանություններ, որոնք աղավաղում են հոդվածի բովանդակությունը: Օրինակ՝ «добовые зерновые растения» թարգմանիչը զարժել է «հացադդի թիթեռնածաղկավոր բույսեր» այնինչ այդպիսի բույսեր գոյություն չունեն բնության մեջ, կան հացադդի կամ հասկավոր բույսեր և առանձին՝ թիթեռնածաղկավոր կամ պատիճավոր բույսեր:

Ընկ. Ն. Սարուխանյանը («Տեղեկագիր», № 1) իր ռուսերեն հոդվածի եզրակացության մեջ գրում է. «1. При применении минеральных удобрений сильно возрастает урожай лука и значительно изменяется весовое соотношение ботанических групп травостой» (էջ 23). (Ընդգծումն իմն է — Ն. Ն.): Հայերեն ամփոփման մեջ մեր կողմից բնդղծած մասը զարձալ սխալ է թարգմանված և աղավաղել է հեղինակի միտքը:

Նա դրում է. «նկատելիորեն փոփոխվում է խոտակացքի բուսաբանական կազմի կշռային քանակը», այնինչ պետք է լինի—բուսաբանական խմբերի կշռային հարաբերությունը (էջ 24)։ Տարբերությունը ակներև է։ Այդպիսով, փորձի արդյունքների մասին տրված ամփոփումը սխալ հաղորդում է տալիս հայ ընթերցողին։

Երբեմն էլ հոդվածների եզրակացություններն (ամփոփումները) չեն համապատասխանում նույն լեզվով գրված հոդվածների տեքստին ոչ թե թարգմանիչների, այլ հեղինակների մեղրով, օրինակ, ընկ. Շ. Աղարաբյանի և Ե. Հակոբյանի «Տեղեկագրի» № 2 ռուսերեն համատեղ հոդվածի «ВЫВОДЫ» ճիշտ չեն արտահայտում հոդվածի բովանդակությունը։

«ВЫВОДЫ»-ի մեջ ասված է, որ մեծածաղիկ կատարոնը տարածված է Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի բարձունքներում և ոչ մի խոսք չի ասվում, որ այդ բույսը Հայաստանում էլ է տարածված։ Ապա նկարագրվում է, թե ընդհանրապես ինչպիսի էֆեկտ է տալիս հանքային պարարտացումը կատարոնով բուսված մարդագիտիների բերքատվության նկատմամբ և չի մատնանշված, թե որտեղ, երբ և ում կողմից է կատարվել փորձը։ Այնինչ հոդվածի տեքստից իմանում ենք, որ կատարոնը դրվում է և Հայաստանում, որ այդ փորձերը կատարել են հենց իրենք՝ հեղինակները, այն էլ ոչ թե անհայտ տարածություններում, այլ Հայաստանի Սեմյոնովկա գյուղի շրջակա բարձունքներում և փ. Տեխենիս (Ալիբեկ) լեռան վրա։

Եթե հենվելինը միայն «ВЫВОДЫ»-ի կամ ամփոփման տվյալների վրա, ապա պետք է դայինք սխալ եզրակացության՝ այն, որ հոդվածը Հայաստանի պայմաններից չի ելնում և գործնական նշանակություն չունի Հայաստանի պայմանների համար։ Ահա թե ինչու եզրափակումները պետք է ճշգրիտ կերպով արտահայտեն հոդվածների տեքստային բովանդակությունը։

Մեր նպատակն է եղել ցույց տալ աչքի ընկնող այն ընդունված լեզվական թերությունները, որոնք կան «Տեղեկագրի» հայերեն լեզվով գրած հոդվածներում և ամփոփումներում։ Պետք է աշխատել բարելավել հայերեն գիտական լեզուն, այնպես, որ նա կենդանի միջնորդ դառնա գիտ. աշխատողների և ընթերցող հասարակայնության միջև, իսկ դրա համար հարկավոր է, որպեսզի գիտ. աշխատողները ավելի խստապահանջ լինեն հայերեն լեզվի նկատմամբ, սիրեն հայոց լեզուն, հայերեն գրել սովորեն և գրեն այնպես, որ ընթերցողը հեշտությամբ հասկանա և հաճույքով կարդա։ Ամփոփումները պետք է կազմել հանգամանորեն և այնպես շարադրել, որ ընթերցողը լքիվ և ճիշտ գաղափար կազմի ոուսերեն հոդվածների տեքստի բովանդակության մասին։ Նույնը վերաբերում է և հայերեն հոդվածների ռուսերեն ամփոփումներին։

Խ. Ա. ԵՐԻՑԵԱՆ

Հայկական ՍՍԻԻ Գիտությունների ակադեմիայի
Թղթակից անդամ